

ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայերենի խոնարհման համակարգի պատմական զարգացման մեջ իր ուրույն տեղն ունի սահմանական եղանակի ներկա ժամանակը: Հայոց լեզվի բանավոր-խոսակցական տարբերակներում այսօր ներկայի քերականական իմաստը դրսևորման միանշանակ արտահայտություն չունի. այն տարբեր վայրենում հանդես է բերում կառուցվածքային որոշակի տարբերություններ:

Գրաբարում ներկա և անցյալ անկատարի ձևերը կիրառական-իմաստային բազմազան դրսևորումներ են ունեցել, որը պատճառ է դարձել գրաբարի խոնարհման համակարգի քայքայման: Նշված ժամանակաձևերը լեզվական երեւոյթները պարզեցնելու բնականոն օրինաչափությամբ վերաճել են այլ եղանակաձևերի՝ դարձել ըղձական ապառնի և անցյալ ապառնի: Արդեն իսկ դասական գրաբարում տարածված երևույթ էր ներկան և անցյալ անկատարը ապառնու իմաստով գործածելը, այսինքն՝ ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը սահմանական եղանակի իմաստն արտահայտելուց բացի, որը դրանց հիմնական գործառական հատկանիշն էր, կիրառվել են նաև ստորադասական եղանակի փոխարեն. «Այդ գործածության դյուրին է ծագումը գուշակել: Քանի որ բուն հին ժամանակները հատուկ ստորադասական անկատար չունեն լեզուն, այլ շատ անգամ սահմանական անկատարն անոր պաշտոնն ալ կրկատարներ, քանի որ կրսվեր. Թող ինքն երթայր եւ առնույր, այն սահմանականը բնականապես և անզգալարար կառաջնորդեր այս սահմանականիս, և ըսել կուտար նույն կերպով՝ Թող ինքն երթաւ և առնու, փոխանակ՝ ինքն երթիցէ եւ առցէ ըսելու»¹: Այսպիսով, ներկա և ապառնի բայաձևերի բազմիմաստությունը փաստորեն սկսվել է անցյալ անկատարից: Գրաբարը ստորադասական անցյալի ձևեր չի ունեցել: Սակայն քանի որ լեզվում ստորադասական անցյալ ժամանակի գաղափարը եղել է, այն գտել է նաև արտահայտման, դրսևորման ձևեր. որպես այդպիսիք հանդես են եկել անցյալ անկատարի ժամանակաձևերը, այսինքն՝ սիրէի բայաձևը բացի բուն ստորում էի» իմաստից ձեռք է բերել նաև ստորի, կտորի, պիտի սիրի» իմաստները: Դասական շրջանի մատենագրության մեջ կարելի է ցույց տալ նման կիրառության բազմաթիվ օրինակներ. «Իսկ արդ ուր է երանութիւնն ձեր, վկայեմ ձեզ, եթէ հնար ինչ էր, զաչս ձեր ճաճէիք (կհաներ) եւ տայիք (կտայիք) ինձ (Թուղթ առ Դադ. Դ, 15), եւ զըմիսն եթէ սիրտ ուրուք առնուր (առնեմ) եւ ուտէր (ուտեմ) ոչ վնասէր. (Եզնիկ. էջ 47), եթէ հաւատայիք գուք Մովսիսի, հաւատայիք (կհավատայիք) արգելք եւ ինձ (Յովհ., Ե 46)»²: Հետագա ժամանակաշրջանում սահմանականի՝ ըղձականի իմաստով կիրառությունը համարանությամբ ընդգրկել է նաև ներկայի բայաձևերը, և սիրեմ բայն ունեցել է ոչ միայն ստորում եմ», այլև՝ ստորեմ, ձստորեմ, պիտի սիրեմ» իմաստները:

Մատենագրության մեջ սահմանական ներկայի՝ ստորադասական ներկայի իմաստով կիրառության դեպքերը նույնպես շատ են, ինչպես. «Եւ առաքեմ

¹ Ա. Այտրնյան, Քննական քերականություն աշխարհարար կամ արգի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 74:

² Ա. Անթոնյան, Հայոց լեզվի պատմական քերականություն, Երևան, 1975, էջ 467-468:

(ուղարկեմ) զքեզ առ Յեսսէ (1 Թագ., ԺԶ 1), Յորժամ արգելուս (արգելես) և փակես (փակես) զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին (կկատարվեն) խորհուրդք կամաց քոց, եւ որպէս երեւիս մեզ ի դենիս մերում, Թիւնս (կտիրես) դու եւ երկրին Քուշանաց, եւ Յոնք իսկ ոչ ելանեն ընդ քո իշխանութիւնդ (Յղիշե, էջ 9), Բայց եթէ մի օրէնս դարձուցանես (դարձնես) զամենայն ազգս եւ ազինս... (Յղիշե, էջ 9)³:

Ավելի ուշ ներկա և անցյալ ժամանակաձևերի բազմիմաստ գործածութիւնը այնքան է տարածվել, որ ստորադասական իբրեւ հղանակ դուրս է ընկել լեզվից, և ներկա ու անցյալ անկատար բայաձևերը լիովին փոխարինել են ներքան: Ստորադասական հղանակի վերացման հետեանքով բայական համակարգում անորոշութիւն և խառնաշփոթութիւն է առաջացել: Լեզվական միջնույն ձևով արտահայտվել է քերականական մի քանի իմաստ. գրաբարի սահմանական ներկան միաժամանակ դարձել է թե՛ սահմանական ներկա, թե՛ ապառնի և թե՛ ստորադասական: Եվ ահա լեզվի պարզութեան, հստակութեան ձգտման բնականոն զարգացման ընթացքում, երբ դեռ սահմանական ներկան լիովին չէր փոխարինել ստորադասականին, կազմվել է նոր ստորադասական՝ կենամ բայի և ու շաղկապի հարադրութեամբ, այսպես՝ «Որ երկրէն ի դուրք կենայ ու երթայ ի վաճառ, Որ առջև կենայ ու վնարվի, Թէ կենան ու կովին»⁴: Ստորադասականի այս նոր ձևը, որը ցույց էր տալիս միայն մի անգամ կատարված և ոչ թե շարունակվող, տեղական գործողութիւն, չի կարողացել ընդհանուր գործածութիւն գտնել և հաստատվել լեզվի մեջ:

Բազմիմաստութիւնը բայական համակարգում շարունակել է գոյատեւել և այն վերացնելու նպատակով սկսել է կիրառվել նախդրիվ անորոշ դերբայով և օժանդակ բայով հարադրված ներկան: Հայտնի է, որ գրաբարում անորոշ դերբայը ենթարկվում էր արտաքին ա հոլովման, և ներգոյականի իմաստը դրսևւմովում էր հայցականի վրա ի նախդրի ավելացնելով: Հայտնի է նաև, որ սահմանական ներկան գործողութեան մեջ լինելու զաղափար է արտահայտում, և որ այդպիսի հատկութեամբ օժտված է ներգոյական հոլովը: Հետեւաբար անորոշի նախդրիվ հայցականը ներգոյականի իմաստ ունենալով՝ կարող էր արտահայտել ներկայի իմաստ: Այս փաստը նշել է դեռևս Ա. Այտընյանը: Նա, խոսելով միջին հայերենում ներկայի ժխտականի կազմութեան մասին, գրում է, որ այն երևան է գալիս XI—XII դարերում հետևյալ կաղապարով՝ օժանդակ բայի ժխտական ձև, նախդրի և անորոշ դերբայ՝ չեմ ի գրել. «նույն ձևով և նույն նախդրով կը ձևանար երբեմն նաև հաստատական խոսքը. — խասիաթն զառանձին գործն է ի ամիլ (ԺՔ դար), այսինքն խասիաթ՝ հատուկ գործն ըսել է. Յոնք եւ ի գալ ի վերայ մեր (է դար), վրանիս կու գան. Դուք զտաճարն այլ այրել էք ի տալ (է դար), տաճարն ալ այրել կու տաք, — որոնց բացասական էր բնականապէս՝ չէ ի ասիլ, չէն ի գալ, չէս ի տալ: Ասոր ալ հիմը հին գրաբարն է. Դեռ ի ծաղկել է»⁵: Ստ. Պալասանյանը նույնպես, քննելով արեւմտահայ լեզվում ներկայի կազմութիւնը, գրում է. «ճիշտ այս մտքով վարում էին հները (է, ԺԱ, ԺԲ դդ.) անորոշ դերբայի ներգոյականը եւ օժանդակ բայի ներկա և անցյալ անկատար ժամանակներովը. ի խօսել եւ, ի ծաղկել էր...»⁶:

Սահմանական ներկայի այս կազմութիւնները հետագա դարերում բավական լայն կիրառութիւն են ստացել հայոց լեզվում: Ղ. Հովնանյանը, ուսումնասիրելով միջին հայերենի գրավոր նյութերը, անորոշով ներկայի բազմաթիվ օրինակներ է նշում՝ Վարդան Արեւելցու «Պատմութիւն տիեզերական» և Մաղաբիա Արեւայի «Պատմութիւն թաթարաց» աշխատանքներում: Նա Արեւելցու մոտ — ում վերջավորութեամբ անկատար դերբայի մեկ օրինակ է վկայում, նշելով,

³ Նույն տեղում:

⁴ Հ. Աճառյան, Լիակատար քերականութիւն հայոց լեզվի (այսուհետեւ ԼՔՀԼ), հ. 4, մաս Ա, Երևան, 1959, էջ 389:

⁵ Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 87:

⁶ Ստ. Պալասանյան, Ընդհանուր տեսութիւն արեւելյան նոր գրավոր լեզվի հայոց, Թիֆլիս, 1870, էջ 69:

որ նրա լեզվում անորոշ դերբայի ի նախորդվ հայցականի և օժանդակ բայի համադրությամբ կազմված միավորները հաստատական ներկայի հիմնական ձևերն են. «Բերենք քանի մի օրինակ: Հայտնի է, որ Կիլիկիո բարբառում մեջ շատ ցանցառ կը հանդիպի — «ում վերջավորությունն թե ի գոյականս և թե ի դերբայս: Արդ նույն ձևն սակավ տողերու մեջ երկու անգամ կը գործածեն Վարդան. «Ի սրտումս դրի զքո խօսքդ»: Ավելի նշանակական է մյուսն. «Քէզ աղօթք են առնում». որու հետ կապյալ են նաև հետևյալքն: Յուր գրություններեն բերված քանի մը օրինակաց մեջ կը կարդանք. «Զորք էն յասէլ: Թէ շատ էք ի հաւրցանէլ: Խօսք մի էմ յասէլ (ի) հավատալ եմ: Հետ մեզ վասն այն են ի կոռվիլ»⁷:

Այսպիսով, մատենագիտական աղբյուրները վկայում են, որ նախորդիվ անորոշ դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ կազմված բայաձևերը եղել են հաստատական ներկայի արտահայտման հիմնական ձևեր: Սրանք ժամանակագրական առումով նախորդել են ներկայի ոչ միայն գերբայավոր, այլև մասնիկավոր կազմություններին:

Հ. Աճառյանը նշում է անորոշ դերբայով կազմված անցյալ անկատարի ձևեր, որոնք ավանդված են V դարից, այսպես՝ «Ծտ ում տալ էր զօրենսն (որին որ հաղորդություն տալիս էր կամ տալու էր՝ տվեց/). Բուդ., 23/, Ընդ որ զալ էր յորով գալիս էր կամ գալիս էին/). Բուդ., 250/»⁸: Այս օրինակները ենթադրել են տալիս համապատասխան ներկայի գոյությունը նույն ժամանակաշրջանում: Միջին հայերենում, ըստ մատենագիտական վկայությունների, սահմանական եղանակի ներկա ժամանակի ժխտական բայաձևերը կազմվել են անորոշ դերբայի օգնությամբ, այսինքն՝ այդ շրջանում ժխտական խոնարհումը կազմելու հիմնական եղանակը անորոշ դերբայի ներգոյական հոլովը օժանդակ բայի ժխտական ձևերի հետ գործածելն է: Այս փաստը ինքնին հուշում է այն մասին, որ նախքան ներկայի մյուս ձևերի հանդես գալը ներկա ժամանակափմաստը դրսևվորվել է անորոշ դերբայով. «Այս պիտ» մասնիկով կազմված ներկան և անցյալը, սակայն, գործ են ածվում միայն դրական ձևով: Դրա գործածությամբ լեզվից դուրս է ընկնում «ի» նախորդով և անորոշ դերբայով կազմված դրական ձևը, ինչպես՝ «եմ ի հաւատալ». «եմ ի գրել»: Այս վերջինները մնում են իբրև բացասական, և առաջ է գալիս այսպիսի խոնարհում. դրական՝ կու տամ, կու տաս, կու տայ... բացասական՝ չեմ ի տալ, չես ի տալ, չէ ի տալ»⁹: Ի դեպ, ի նախորդով և անորոշ դերբայով կազմված դրական ձևերը լեզվից դուրս չեն ընկել (ընկել է միայն ի նախորդը). հայերենի բարբառներում դրանք այսօր էլ շարունակում են գործառել ներկայի (մասամբ նաև ապառնու) ոլորտում:

Ինչպես նկատել է Ա. Աբրահամյանը, անորոշ դերբայով ժխտական ձևերի ամենավաղ գործածությունն օրինակներ կան Շապուհ Բագրատունու մոտ (X դար). «Եւ երբ հասան ի շուրն ասէ իզան և եղբարքն նորա և ասեն. «Իշխան Դերեն, չէնք աղէկ ի տեսանել զբանակն նոցա, գի կարի ամպոխ են, չէ պարտ այս ար գնալ մեզ առ նոսայ, դարձիր որ երթանք ի Կոտորոց ամրոցն մեր»¹⁰, նման դիտարկում է կատարել նաև Ա. Ղարիբյանը. «Շապուհ Բագրատունու մոտ, որի զրույցների մի մասը վերաբերում էր Հերի (Խոյի) գավառին, ունենք այսպիսի արտահայտություններ. «Երգմնացուցանեմ զքեզ ի խաչ, որ ի Վարագէ, չե՞ս զիս նաւաչել (ինձ չես ճանաչում). Եւ ասէ Դերենն. «Գիտեմ աստուած իմ սուրբ նշանն, որ չեմ նաւաչել, թէ դու ով ես» (չեմ ճանաչում, թե դու ով ես)»¹¹: Հատկանշական է, որ Ա. Ղարիբյանի բերած օրինակներում ի նախորդը սղված է:

Այսպիսով, եթե նկատի ունենանք, որ անորոշ դերբայի և օժանդակ բայի

7 Ղ. Հ ո վ ն ա ն, Հնագոյությունը նախնայաց ռամկորենի վերա, Վիեննա, 1897, էջ 254:

8 Տ Ե Ն Ի ՉԶԼ, հ. 4, մաս Բ, Երևան, 1961, էջ 174:

9 Մ. Ա ր Ե Վ յ ա ն, Երկեր, հ. 2, Երևան, 1972, էջ 255:

10. Ա. Ա ր Ե Վ յ ա ն, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953, էջ 241:

11 Ա. Ղ ար Ի ր յ ա ն, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 166:

հարադրությամբ կազմված ներկայի դրական ձևերի առաջին վկայությունները հասնում են մինչև VII դար, իսկ դրանց նախատիպերը առկա են արդեն իսկ մեր մատենադրության սկզբնավորման շրջանում (նույնի ժխտական կազմությունները հանդիպում են սկսած X դարից), մինչդեռ կու մասնիկով և —ում վերջավորությամբ դերբայով հարադրված ձևերի առաջին օրինակները մատենադրության մեջ հանդիպում են XII դարից սկսած, ապա ընդունելի կարելի է համարել, որ անորոշ դերբայով և օժանդակ բայով հարադրված բայական միավորները նոր ներկայի ամենանախնական ձևերն են եղել: Կարելի է կարծել, որ այսպիսի կազմությամբ ներկան սկզբնական շրջանում, երբ արդի բարբառների հնչյունական և ձևաբանական էական առանձնահատկությունները դեռ նոր էին ուղևորվում գծագրվել է հայերենի ողջ տարածքը՝ կիրառվելով գրաբարյան ներկային զուգահեռ: Հետագայում միայն, հին շրջանում գոյություն ունեցող բարբառային տարբերությունների խորացմանը զուգընթաց, անորոշով ներկան, ինչպես հետո կտեսնենք, կենտրոնացել է արևելյան բարբառների մի մասում:

Գրաբարյան ներկայի նման անորոշով ներկան ևս ժամանակի ընթացքում ձևաբար է բերել բազմիմաստություն, հետևաբար չէր կարող լուծել խոնարհման համակարգի, հատկապես ներկայի, պարզեցման, միօրինականացման խնդիրը, և դարձյալ առաջացել է ներկա ու ապառնի ժամանակաձևերի տարբերական հարցը: Առանձին ներկա ունենալու, բայական միավորների բովանդակության պլանում հստակություն մտցնելու նպատակով հայերենի տարածական տարբերակները դիմել են նոր ձևերի: Պատմական Հայաստանի արևմտյան տարածքում սկսել է կիրառվել մասնիկավոր ներկան, այսինքն՝ սրանցում ներկայի նորակազմ ձևերը կազմվել են կու մասնիկի և գրաբարյան ներկա բայաձևերի հարադրությամբ:

Ա. Այտընյանը մի շարք փաստերի վերլուծությունից հետո գալիս է այն եզրակացության, որ. «Կու մասնիկը կը սկսի այն ատեն, երբ հին սահմանականն ստորադասականին և ապառնվուն տեղն անցած էր: Մենք ԺԲ դարու մեջ կը գտնենք առաջին անգամ այս կու մասնիկն, սակայն անտարակոյս է, որ նույն ատեն հանկարծ չլուսավ, ինչպես որ հարկավորությունն ալ հանկարծ չէր զգացված»¹²: 2. Աճառյանը, հենվելով 3. Կարստի տվյալների վրա, ասում է. «Առաջին անգամ կու մասնիկը երևան է գալիս գրականության մեջ ԺԲ դարում: Մխիթար Հերացին ունի երկու ձև՝ կու գայ... և կու լիճի..., որոնք Վենետիկի 1832 թվ. հրատարակության մեջ գրված են միահար իբրև մի բառ (կու-գայ, կուլինի), բայց պետք է անշատ համարել»¹³: Ինչպես նշում է Ա. Մարգարյանը. «Այս հիշատակությունը, սակայն, խիստ թերի է. իրականում այնտեղ կու գայ և կու լիճի ձևերից բացի կան նաև այլ գործածություններ, ինչպես կառեհ..., կառեհ..., կուռեհաբաշ..., Կեռեհաշ..., կուռեհաշ..., կուռեհաշ..., կուռեհաշ..., կուռեհաշ..., կուռեհաշ...»: Մ. Արեղյանը կու նախամասնիկի վաղ գործածության օրինակներ է նշում Ներսես Շնորհալու առակներում. «Քան զծիրանի ծով կուռեհաշ», «Հետ կու կառեհ զհետ», «Գարին ի փորն կու առեհ», «Պարան յեան և քարշ կու գայ»¹⁴, որոնք Ա. Մարգարյանի կարծիքով Մխիթար Հերացու գործածածներից ավելի հին լինելով, կու-ի գործածության առաջին ձևերն են ոչ միայն XII դարի, այլև ամբողջ հայ հին գրականության մեջ¹⁵:

Այսպիսով, կու մասնիկը գրավոր աղբյուրներում առաջին անգամ երևում է XII դարից սկսած: Նախապես ունենալով սահմանափակ գործածություն՝ այն հետագա դարերում ձևաբար է բերել լայն ու ծավալուն կիրառություն: XII—XIV դդ. միջին հայերենյան շրջանի գրականության մեջ լայնորեն գործածվում է նոր ներկան: Կու մասնիկը դրվում է ինչպես բաղաձայնասկիզբ, այնպես էլ ձայնա-

12 Ա. Այտընյան, նշվ. աշխ., էջ 75—76:

13 ԼՔՀԼ, հ. 4, մաս Ա, էջ 389:

14 Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966, էջ 376:

15 Մ. Արեղյան, նշվ. աշխ., էջ 255:

16 Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 376:

վորասկիզր բայերին կից: Շատ են նաև կու-ի կը, կ հնչյունափոխված ձևերը: Այսօր կու մասնիկը գործառու է արևմտյան խմբակցության բարբառների ներկայի ուղորտում, որոնք ըստ ներկայի ձևաբանական հատկանիշի խմբավորվում են կը ճյուղում: Կը ճյուղի բարբառների մեծ մասում ներկայի ցուցիչները բաղմարժեք են: Եղանակի կարգում դրանք արտահայտում են ոչ միայն սահմանական, այլև պայմանական եղանակաիմաստ: Այս բարբառներում էլ փորձ է արվել որևէ ելք գտնել ներկա և ապառնի բայաձևերը տարբերակելու համար, և որպես միջոց հնարվել է շարունակական ներկան:

Բարբառային մի ընդարձակ տարածքում (Մակու, Բայադետ, Երևան, Լոռի, Նոյեմբերյան, Շամշադին, Գանձակ, Շամխոր-Խանլար-Դաշքեսան, Շամախի, Ղարաբաղ, Գորիս, Աստրախան, պարսկահայ գաղութ) ստեղծվել է ներկա ժամանակաիմաստի արտահայտման մեկ այլ ձև — ում վերջավորությունը դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ: Ներկայի այսպիսի կազմությամբ բարբառային միավորները խմբավորվում են Ում ճյուղում: Հ. Աճառյանի կարծիքով նախապես այս բարբառային գոտում իշխել է մասնիկավոր կազմությունը բարբառների ձևաբանական տիպը. «Ամեն լեզվի մեջ էլ ներկան կարող է իբրև ապառնի գործածվել: Սակայն այն բոլոր լեզուներում, ուր ներկան նաև իբրև ապառնի է գործածվում, կա հատուկ և առանձին ապառնի: Գրաբարի ապառնին շնչվելուց հետո միջին հայերենը առանձին ապառնիից զուրկ մնաց: Անպատեհությունը վերացնելու համար անհրաժեշտ էր ուրեմն կամ առանձին ապառնի ստեղծել և կամ նոր ներկա հնարել: Առաջին միջոցին դիմեցին արևմուտքի հայերը, որոնք ստեղծեցին պիտի ձևով ապառնի և ներկայի համար հաստատ պահեցին կը ձևը: Երկրորդ միջոցին դիմեցին արևելքի հայերը, որոնք ներկայի համար հնարեցին ում ձևը, պահեցին կը ձևը ապառնիի համար, իսկ պիտի ձևը՝ պարտավորականի համար»¹⁷:

Սա հաստատվում է նախ այն փաստով, որ կու(կը) մասնիկով բառաձևերն այսօր կենդանի են Ում ճյուղի բարբառներում որպես պայմանական ապառնու բայաձևեր, և ապա՝ դեռ կան բարբառային միավորներ, որոնք ում-ով ներկային զուգահեռ գործածում են կը մասնիկով ներկան: Այսպես՝ Նախիջևանի Շուտութ գյուղի խոսվածքը լրացնելիս Դ. Կոստանդյանը նկատել է հետևյալը. «Խոսվածքի հետաքրքիր հատկությունն է ընդհանրական ներկայի համար կը-ով ձևերի գործածումը: Քերականական զուգաբանություններ բաժնում կը-ի գործածություն չի արտացոլված: Սակայն բառային զուգաբանություններ բաժնում կան շատ օրինակներ. Մէք կօթըհան յէղած տանակին ճօնդիկ կաւէնէ: Յէղբարով մանգաղին կըսըէն»¹⁸: Հայտնի են նաև Թիֆլիսի բարբառում գործառու ներկայի ում-ով և կը-ով զուգահեռ կազմությունները: Եվ վերջապես Ում ճյուղի բարբառներում նախնական կը-ով ներկայի գործածության կարևոր ապացույց է գրանցում կը-ով ներկայի առկայությունը պատմական ներկայի ձևով, այսպես՝ «Ժամանակով մի թաքավոր կըլի, թաքավորին կուենեա իրեք տղա, իրեք ախլիկ»¹⁹:

Հայագիտության մեջ — ում ձևությունը դերբայի գործածության սկիզբը համարվում է XII դարը, և որպես նրա հնագույն վկայություն, բերվում են հետևյալ երկու օրինակները. «Ապա թէ հիւանդին թտպիրն մաշում լինի», «Ապա թէ, — ազինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով է ընդ ցամաք՝ ամենու սիրտն հետ քեզ լաւ են, և քեզ աղոթք եմ առնում»: Ա. Մարգարյանը կասկածի տակ է առնում «մաշում» ձևի — ում վերջավորությամբ անկատարի հնագույն օրինակ լինելու փաստը: Նրա կարծիքով «մաշում» ձևը ոչ թե մաշել բայի անկատարն է, այլ արարական փոխառություն է և ունի չարաղետ, չարագուշակ իմաստները: Նա — ում ձևությունը անկատարի առաջին վկայություն համարելով աղոթք են առնում» նախադասությունը, բերում է նաև երկրորդ

17 ԼՔՀԼ, հ. 4, մաս Բ, էջ 173:

18 Դ. Կոստանդյան, Նախիջևան, Շուտութ գյուղ, Հայերենի բարբառագիտական աստվածի անտիպ նյութեր, տետր 212:

19 Տե՛ս ԼՔՀԼ, հ. 4, մաս Բ, էջ 87:

օրինակը, որն ավանդված է 1474 թվականին Զագեոս գրիչի կողմից. «Գրում ի, մուկն ցեթեց ի վերայ լուսանցին»²⁰:

Ա. Աբրահամյանը վկայակոչում է մի օրինակ, որը — ում վերջավորությամբ անկատար դերբայի առաջացման ժամանակը հինգ դարով առաջ է տանում: Դա VII դարի հեղինակ Սեբեոսի պատմության մեջ գործածված «ի տե-
սանելումն» ձևն է: Ա. Աբրահամյանի կարծիքով այս ձևը «տեսանել բայի ան-
կատար դերբայի նախնական ձևն է՝ գեո հոլովական վիճակում, կազմված ոչ
անմիջապես տեսանել անորոշ դերբայից, այլ՝ տեսանելի դերբայական ձևից
(ի ձայնավորի սզումով), որը... նույնպես անորոշ դերբայից է կազմվում»²¹:

Ում ճյուղի բարբառներում անկատար դերբայի ում ձևովը ենթարկվում է հետևյալ հիմնական փոփոխությունների՝ ըմ (սիրըմ), ամ (սիրամ), իմ (սի-
րիմ), ում (սիրում): Նշված բայական ձևերը կազմում են մի խումբ, որի մեջ
մտնող բայական միավորները ծագումնաբանական մեկ հիմք ունեն, զարգացել
են — ում վերջավորությամբ ձևից ու ձայնավորի ու-ը, ու-ա, ու-ի, ու-ու հընչ-
յունափոխությամբ:

Դեռևս գրաբարում ներկայի ոլորտում գործառել են — ման մասնիկն ունե-
ցող դերբայով և օժանդակ բայով կազմությունները, այսպես օրինակ՝ «ի դռ-
ման հմ», «Որպես իրն, որ ի փոփոխման է»²²: — Ման մասնիկով կազմված դեր-
բայը շարունակել է իր գոյությունը և հանդիպում է նաև հետագա գրավոր աղբ-
յուրներում: Սակայն ներկայի այս բայաձևերը ընդհանրական բնույթ չեն
կրել, հատուկ են եղել մի փոքր հատվածի՝ Հին Զուղային: Ահա «Ողբ ջուզա-
յեցվոց» բանաստեղծությունից մի հատված.

Ափսոս քեզ, հայոց խեղճիկ ժողովուրդ,
Յիրուցան եղաք անմեղ, անխորհուրդ,
Գերի գնաման ամ դեպ ի խորասան,
Քաղցած ու ծարավ, տկլոր, թշվառական,
էն սիրուն դաշտերն, մեծ-մեծ քաղաքներն,
Քաղցրիկ ջրերն, մեր շեն գեղերն,
Ումն ամ քոզման դուք, որ գնաման ամ.
էսպես կլինի, որ մոռանում ամ²³:

— Ման ձևով բայաձևերը հետագայում պահպանվել են միայն Նոր Զու-
ղայի բարբառում, իսկ Հին Զուղան շրջակա բարբառների ազդեցությամբ կորց-
րել է այդ ձևը. «Բարբառի»²⁴ ձևափոխությունը կատարվել է մի քանի կողմից,
Նոր Զուղան ինքն իր մեջ, և Հին Զուղան էլ ինքն իր մեջ, երկուսը իրարից ան-
կախաբար զարգացել են անշուշտ: Մյուս կողմից Նոր Զուղայի բարբառը թեև
պահել է, այսպես ասած, ավելի անկախ գոյություն, ընդհանրապես Հին Զու-
ղան շարունակ ազդվել է շրջակա բազմաթիվ բարբառներից: Հիշենք գլխավո-
րապես Երևանի բարբառի համատարած ազդեցությունը²⁴:

Արևելյան տարածքի մի շարք վայրերում (Ուրմիա, Ագուլիս, Մեղրի, Կար-
ճեան, Ղարադաղ, մասամբ՝ Խոյ-Սալմաստ) ստեղծվել է ներկայի արտահայտ-
ման նոր ձև՝ լիս վերջավորությամբ դերբայով հարադրված, իսկ անորոշ դեր-
բայով կազմությունները նախապես գործառել են պայմանականի եզանա-
կախմաստը դրսևորելու համար: Անհրաժեշտ է նշել, որ պայմանականի անորո-
շով կազմությունը առկա է միայն ներկայի հարացույցում լիս ձևով ձևա-
կատար դերբայն ունեցող բարբառներում, այն էլ ոչ բոլորում: Հավանաբար,

²⁰ Ա. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 473:

²¹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 33:

²² ԼՔՀԼ, հ. 4, մաս Բ, էջ 174:

²³ Բանաստեղծությունը գրել է Հին Զուղայի Շամբ գյուղի նախավկայի վանքի Ստեփան
վարդապետը 1605 թ. (տե՛ս Գ. Սեալ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան,
1955, էջ 324):

²⁴ Հ. Աճառյան, Քննություն Նոր Զուղայի բարբառի, Երևան, 1940, էջ 32:

հետագա ժամանակաշրջանում վերոհիշյալ բարբառների մի մասը տարածական և գործառական մեծ ընդգրկում ունեցող կը մասնակցով պայմանական ապառնու ազդեցությամբ կիրառել է կը-ով ձևը, իսկ անորոշ դերբայով կազմությունը պահպանվել է միայն մի քանի բարբառներում՝ Ագուլիս, Մեղրի, Կարճևան, Արեշ, Կոզեն:

Արեշ

ապրէլ ըմ «կապրեմ»

ապրէլ անք

Մեղրի

սէբիլ իմ «կըսիրեմ»

ապրէլ աք

սէբիլ իս

ապրէլ ի

սէբիլ իք

ապրէլ ի

ապրէլ ան²⁵

սէբիլ ի

սէբիլ ին²⁶

Անկատար դերբայի -լիս ձևով թույլ տարբերակը մեր մատենագրության մեջ հանդիպում է սկսած V դարից. Փավստոս Բուզանդը այն գործածել է որպես հոլովաձև. «Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն տեսանէր զկիսն սպանելոյն»²⁷. Ա. Արարհամայանը բերում է մի օրինակ Անանիա Շիրակացուց, որտեղ արդեն -լիս մասնակցով դերբայը չի գիտակցվում որպես հոլովական ձև. «...վասն խառնուածոյ սեաւ թանձր ամպոյն ի հայելիս պայծառութեան լուսոյն՝ շիկագոյն երեկոյ»²⁸:

-լիս վերջավորությամբ դերբայը գործառու բարբառները խմբավորվում են Ս ճյուղում: Այն հայերենի բարբառներում հանդիպում է -լիս, -լիս, -լս, -լի, -լ, -ս տարբերակներով, որոնք նրա պատմական երկարատև զարգացման հետևանք են:

Խոյի, Մարաղայի մի շարք խոսվածքներում շարունակել է գործածվել անորոշով ներկան: Սրանցում ձևաբանական տարբերակման հարցը լուծվել է ապառնու ոլորտում կը մասնակցով հարադրված բայաձևերի կիրառմամբ: Սրանք էլ հենց կազմում են հայերենի բարբառների Լ ճյուղը:

Ամփոփենք: Հինհայերենյան ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի՝ ստորագասականի իմաստով հետզհետե հաճախացող գործածությունները աստիճանաբար պահանջ են առաջացրել ստեղծելու բուն ներկա ժամանակա-իմաստի դրսևորման հատուկ ձևեր: Սկզբնապես այս նպատակով սկսել են կիրառվել նախդրիվ անորոշ դերբայով և օժանդակ բայով հարադրված ձևերը: Ինչպես ցույց են տալիս արդի բարբառների ներկա ժամանակի ժխտական կազմությունները, անորոշով ներկան լայն տարածում է ունեցել ընդգրկելով հայերենի գրեթե բոլոր դրսևորումները: Այսուհանդերձ, այն երկար ժամանակ չի կարողացել դուրս մղել հինհայերենյան ներկան և փաստորեն կիրառվել է նրան զուգահեռ: Ի վերջո գրաբարյան ներկայի հետ պայքարում անորոշով ներկան հաղթող է դարձել հայերենի բանավոր տարբերակների միայն մի մասում, իսկ մյուս մասում առաջացել է ներկայի նոր ձև՝ կազմված կու մասնակցով: Այսպես առաջ են եկել հայերենի բարբառների երկու մեծ ճյուղերը՝ Լ և Կու: Հետագայում նախնական Կու ճյուղի բարբառների մի մեծ խումբ (այժմյան Կը ճյուղի բարբառներ) ներկայի հարացույցում սկսել է կիրառել կու-ով կազմությունը, որը նաև ապառնու իմաստ է արտահայտել: Մյուս խմբի բարբառները (արդի Ում ճյուղի) ստեղծել են ներկայի —ոււմ վերջավորությամբ անկատար դերբայով և օժանդակ բայով հարադրությունները՝ կը-ով ձևերը հատկացնելով միայն պայմանականի եզանակաիմաստը արտահայտելուն:

Լ ճյուղի խոսվածքների մի մասում անորոշով ներկան շարունակել է գործածվել, իսկ ապառնու համար կիրառվել են կը-ով կազմությունները (արդի Լ ճյուղ): Մյուս մասում ներկայի համար ստեղծվել են -լիս վերջավորությամբ դերբայով ձևերը (այժմյան Ս ճյուղի բարբառներ), իսկ անորոշով կազմությունները շարունակել են դրսևորել ապառնու իմաստ: Ավելի ուշ Ս ճյուղի բարբառների մի մասում սկսել է կիրառվել կը-ով ապառնին, իսկ անորոշով ապառնին պահպանվել է մի քանի բարբառներում:

²⁵ Ա. Լուսենց, Արեշի բարբառը, Երևան, 1982, էջ 104:

²⁶ Է. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 208:

²⁷ Ա. Արարհամայան, նշվ. աշխ., էջ 117:

²⁸ Նույն տեղում, էջ 118:

О ВОПРОСЕ ИСТОРИЧЕСКОГО РАЗВИТИЯ
НАСТОЯЩЕГО ВРЕМЕНИ

ГАЯНЭ ГЕВОРКЯН

Резюме

В результате многозначности настоящего времени древнеармянского языка возникла необходимость создания специальных форм, выражающих полный смысл настоящего времени. Сначала в качестве таких форм использовалось настоящее время, выраженное сочетанием неопределенной формы глагола со вспомогательным глаголом. В дальнейшем указанные формы стали многозначными, в связи с чем в армянских диалектах стали употребляться новые формы настоящего времени.

В диалектах восточных группировок новые формы настоящего времени образовывались с помощью частицы «*իլի*» и глагольных форм настоящего времени *грабара*. В северной части западных областей употреблялось деепричастие с окончанием «*-իւմ*». Другая форма настоящего времени, выраженная деепричастием с окончанием «*-իւմ*», была распространена в Старой Джуге. В определенных областях (Хой, Салмаст, Урмия, Агулис, Мегри, Карадах) стала употребляться новая форма выражения деепричастия с окончанием «*-իւմ*».